Արձանագրություն N 2
ՄՍԾ ԷԱՃԱՊՁԲ-23/4 ծածկագրով էլեկտրոնային աճուրդի
գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան 28 դեկտեմբերի 2022թ
ժամը 11:00

Մասնակցում էին հանձնաժողովի՝
Նախագահ՝ Արբակ Սանամյանը
անդամներ՝ Աննա Ավետիսյանը, Լիլիթ Աճեմյանը
քարտուղար՝ Գ. Ջանջուղազյան

I. Հայտերի բացման մասին

(Արբակ Սանամյան)

1. Ընդունել ի գիտություն, որ.

ա/ սահմանված ժամկետում և սահմանված կարգի պահանջներին համապատասխան գնումների էլեկտրոնային (eauction.armeps.am) աճուրդի համակարգի միջոցով էլեկտրոնային աճուրդի ընթացակարգի հրավերով սահմանված հայտերի ներկայացման վերջնաժամկետին հայտեր են ներկայացրել հետևյալ կազմակերպությունները.

N	*Մասնակցի անվանումը*		*Մասնակցի հասցեն և կապի միջոցները*
1	2		3
1	«Մովսեսյան» ՍՊԸ*	-	ք. Երևան, Զաքյան 3շ, 29բն, Պուշկինի 52-8/2, հեռ. (010) 50-18-83, (091) 03-77-88,
2	«Ալֆա-Էտալոն» ՍՊԸ	-	ք. Երևան, Տիգրան Մեծ 29ա, բն. 37, հեռ. +37498 400 559, alfaetalonam@gmail.com
3	«ԼԵՈ Ա» ՍՊԸ	-	հեռ.098815665 mcandfriendo@gmail.com
4	«Պլանետֆայբեր» ՍՊԸ	-	ք. Երևան, Հ. Հակոբյան 3, հեռ.+37495555614, armen.hayrapetyan@planetfiber.am

***Մասնակիցը ԱԱՀ վճարող չէ**

բ/ Մասնակիցների կողմից աճուրդի ամփոփման ժամկետի ավարտին առաջարկված գները հետևյալն են.

Չափ աբ. համարը	Գնման առարկան			Մասնակիցների անվանումները և առաջարկած գինը՝ ըստ չափաբաժինների, առանց ԱԱՀ-ի (ՀՀ դրամ)				Գնման գինը /ՀՀ դրամ/
	անվանումը	Չափի միավորը	քանակը	«Մովսեսյան» ՍՊԸ*	«Ալֆա-Էտալոն» ՍՊԸ	«ԼԵՈ Ա» ՍՊԸ	«Պլանետֆայբեր» ՍՊԸ	
1	2	3	4	5	6	7	8	9
1.	մկնիկ, համակարգչային, լարով	հատ	145	233585	236000	120000000		290000
2.	համակարգչային ստեղնաշարեր	հատ	150	418000		120000000		375000
3.	ցանցային մալուխներ	մետր	610	90000		120000000	91670	122000

գ/ Գնման առարկայի բնութագրերի հիմնավորումներ չեն պահանջվել և չեն ներկայացվել, հայտերի վերաբերյալ կատարված հարցումներ և պատասխաններ չեն եղել:

II. Հայտերի գնահատման մասին

(Արբակ Սանամյան)

2. Գնահատող հանձնաժողովը ուսումնասիրեց աճուրդի մասնակիցների հայտերը, այդ թվում 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից առաջարկվող ապրանքների ամբողջական նկարագիրը և արձանագրեց, որ.

ա/ «Մովսեսյան» ՍՊԸ-ի կողմից 2-րդ չափաբաժնի համար և «ԼԵՈ Ա» ՍՊԸ-ի կողմից բոլոր չափաբաժինների համար ներկայացված գնային առաջարկները գերազանցում են հրավերով սահմանված գնման գինը:

բ/ էլեկտրոնային (eauction.armeps.am) աճուրդի համակարգի կողմից մերժվել է «Մովսեսյան» ՍՊԸ-ի կողմից 2-րդ չափաբաժնի համար հայտը և «ԼԵՈ Ա» ՍՊԸ-ի կողմից բոլոր չափաբաժինների համար ներկայացված հայտը՝ հետևյալ հիմնավորմամբ՝ առաջարկված գինը գերազանցում է հրավերով սահմանված գնման գինը:

գ/ «Մովսեսյան» ՍՊԸ-ի կողմից ներկայացրած ընթացակարգին մասնակցելու դիմում հայտարարությունը (հավելված 1), առաջարկվող ապրանքների ամբողջական նկարագիրը (ապրանքային նշանը, ֆիրմային անվանումը, մոդել, արտադրողի անվանումը) չի համապատասխանում ՄՄԾ ԷԱՃԱՊՁԲ-23/4 ծածկագրով աճուրդի հրավերով սահմանված պահանջներին՝ մասնավորապես.

- դիմում հայտարարության 1-ին կետը չի համապատասխանում հրավերով սահմանված պահանջին:

- առաջարկվող ապրանքների ամբողջական նկարագիրը չի համապատասխանում հրավերի 1-ին մասի 4.3 կետի 3-րդ ենթակետով սահմանված պահանջներին՝ առաջարկվող ապրանքների տեխնիկական բնութագրի հետ, հրավերով սահմանված ձևաչափով ներկայացված չէ ապրանքային նշանի, ֆիրմային անվանման, մոդելի, արտադրողի անվանման վերաբերյալ տվյալները:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ - 0:

3. Գնահատող հանձնաժողովը ղեկավարվելով հրավերի 8.9 կետով սահմանված պահանջներով, որոշեց.

ա/ մերժել համակարգի կողմից մերժված, 2-րդ և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցների կողմից ներկայացված հայտերը հրավերի 8.9 կետով սահմանված պահանջի համապատասխան:

բ/ գնման ընթացակարգի 2-րդ չափաբաժինը հայտարարել չկայացած «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիման վրա, հայտերից ոչ մեկը չի համապատասխանում հրավերի պայմաններին հիմնավորմամբ՝ առաջարկված գինը գերազանցում է գնման հայտով սահմանված գնման գինը:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ - 0:

III. Ընթացակարգի հայտերի գնահատման արդյունքների ամփոփման մասին

(Արբակ Սանամյան)

4. Գնահատող հանձնաժողովը հիմք ընդունելով հայտերի գնահատման արդյունքները, որոշեց.

ա/ հրավերի 8.11 կետով սահմանված պահանջների համաձայն կասեցնել հանձնաժողովի նիստը մեկ աշխատանքային օրով և հրավերով սահմանված կարգով՝ համակարգի միջոցով ծանուցել «Մովսեսյան» ՍՊԸ-ին առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել արձանագրված անհամապատասխանությունը:

բ/ ընթացակարգի հայտի գնահատման նպատակով գնահատող հանձնաժողովի նիստ հրավիրել 2022թ. դեկտեմբերի 30-ին ժամը 10:30-ին ք. Երևան, Նալբանդյան 13, 4-րդ հարկի դահլիճ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ - 0:

Հանձնաժողովի

նախագահ _____ Արբակ Սանամյան

անդամներ՝ _____ Աննա Ավետիսյան

_____ Լիլիթ Աճեմյան

քարտուղար՝ _____ Գ. Ջանջուղազյան

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

շահերի բախման բացակայության մասին

ք. Երևան 28 դեկտեմբերի 2022թ.

ՄՄԾ ԷԱՃԱՊՁԲ-23/4 ծածկագրով էլեկտրոնային աճուրդի գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նախագահ՝ Արբակ Սանամյանս, անդամներ՝ Աննա Ավետիսյանս, Լիլիթ Աճեմյանս հանձնաժողովի քարտուղար՝ Գ. Ջանջուղազյանս նշված ծածկագրով գնման ընթացակարգի հայտերի բացման նիստից հետո հայտարարում ենք, որ հիշյալ ընթացակարգի առնչությամբ չունենք շահերի բախում:

Հանձնաժողովի

նախագահ _____ Արբակ Սանամյան

անդամներ՝ _____ Աննա Ավետիսյան

_____ Լիլիթ Աճեմյան

քարտուղար՝ _____ Գ. Ջանջուղազյան

Արձանագրություն N 3
ՄՄԾ ԷԱՃԱՊՁԲ-23/4 ծածկագրով էլեկտրոնային աճուրդի
գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան

30 դեկտեմբերի 2022թ
ժամը 10:30

Մասնակցում էին հանձնաժողովի՝
Նախագահ՝ Արբակ Սանամյանը
անդամներ՝ Աննա Ավետիսյանը, Լիլիթ Աճեմյանը
քարտուղար՝ Գ. Ջանջուղազյան

օրակարգ 1. ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 29.12.2022թ. թիվ 04/26-1/23001-2022թ գրությամբ ներկայացված էլեկտրոնային աճուրդի համակարգի խափանման պատճառով 27/12/2022թ.-ին ժամը 11:08-ից մինչև 11:28-ն ընկած ժամանակահատվածում անցկացված որոշ աճուրդների (խափանված չափաբաժինների մասով) խափանված ընթացակարգերի վերաբերյալ գրության հարցի քննարկում:
2. Գնման ընթացակարգը խափանված չափաբաժինների մասով չկայացած հայտարարելու մասին:
3. «Մովսեսյան» ՍՊԸ-ի կողմից հայտով ներկայացրած փաստաթղթերի շտկված տարբերակների գնահատում:

I. Հայտի գնահատման արդյունքների մասին

(Արբակ Սանամյան)

1. Ընդունել ի գիտություն, որ.

Սահմանված ժամկետում «Մովսեսյան» ՍՊԸ-ն հանձնաժողովին է ներկայացրել հայտով ներկայացրած փաստաթղթերի շտկված տարբերակները:

ՀՀ ֆինանսների նախարարությունը 29.12.2022թ. թիվ 04/26-1/23001-2022թ գրությամբ հայտնում է, որ 27/12/2022թ.-ին ժամը 11:08-ից մինչև 11:28-ն ընկած ժամանակահատվածում էլեկտրոնային աճուրդի համակարգը աշխատել է խափանումներով, ինչի արդյունքում խոչընդոտվել է նշված ժամանակահատվածում էլեկտրոնային աճուրդի բնականոն ընթացքը:

1.1. Գնահատող հանձնաժողովը հիմք ընդունելով ՀՀ ֆինանսների նախարարության գրությունը, ղեկավարվելով հրավերով և ՀՀ կառավարության 02/05/2019թ. N 516-Ն որոշման 2-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված պահանջներով, որոշեց.

ա) ՄՄԾ ԷԱՃԱՊՁԲ-23/4 ծածկագրով գնման ընթացակարգի 1-ին չափաբաժինը հայտարարել չկայացած՝ «Գնումների մասին» օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի հիման վրա:

2. Գնահատող հանձնաժողովը ուսումնասիրեց մասնակցի կողմից 3-րդ չափաբաժնի համար ներկայացրած շտկված փաստաթղթերը և արձանագրեց, որ ներկայացրած փաստաթղթերը համապատասխանում են հրավերով սահմանված պահանջներին:

Հանձնաժողովը որոշեց 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված հայտը 3-րդ չափաբաժնի մասով գնահատել բավարար:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ - 0:

II. Ընթացակարգի հայտերի գնահատման արդյունքների ամփոփման մասին

(Արբակ Սանամյան)

3. Ներկայացված գնային առաջարկների և հայտերի գնահատման արդյունքների հիման վրա հանձնաժողովը որոշեց.

ա/ «Մովսեսյան» ՍՊԸ -ին ընտրված մասնակից ճանաչել՝ 3-րդ չափաբաժնի համար:

Ընտրված մասնակից է ճանաչվել բավարար գնահատված և էլեկտրոնային աճուրդի արդյունքում նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ - 0:

III. Հայտարարություն պայմանագիր կնքելու որոշման մասին

(Արբակ Սանամյան)

4. Հանձնաժողովը որոշեց ընտրված մասնակցին 3-րդ չափաբաժնի համար պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել և նրանց հետ կնքել պայմանագիր «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածով և հրավերով սահմանված անգործության ժամկետի ավարտից հետո:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ - 0:

Հանձնաժողովի

նախագահ _____ Արբակ Սանամյան

անդամներ՝ _____ Աննա Ավետիսյան

_____ Լիլիթ Աճեմյան

քարտուղար՝ _____ Գ. Ջանջուղազյան